ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2022 թվականի N 190-Ա

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մայիսի 4-ի N ԳՍ/14.1/11166-2022 գրությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանին և տեղակալի օգնական Արտաշես Մարտիրոսյանին 1 օրով՝ 2022թ. մայիսի 13-ին գործուղել Գորայք համայնք՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի հանրային քննարկումներին մասնակցելու նպատակով:
2. Մարզպետարանի սպասարկող անձնակազմի վարորդ Գևորգ Արզումանյանին՝ Տոյոտա Քամրի մակնիշի 060 CA 61 պետհամարանիշի ավտոմեքենայով ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ կատարել հրամանից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

13.05.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ.մայիսի 12
ք. Կապան